ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «16» 01. 2020թ.
ժամը 15^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի պետ, գնդապետ Ա. Հովսեփյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժնի երկրատեղեկատվական և պլանավորման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ, Ա. Միքայելյան,
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժնի տեղագրաերկրաբաշխական, նավարկային և պլանավորման բաժանմունքի սպա, մայոր Գ. Հովսեփյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ.Տերյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Գեոշին Գրուպ» ՍՊԸ, ում ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը թերի է՝ բացակայում է հրավերով նախատեսված ապրանքի պաշտպանվածությանը վերաբերվող պահանջը և անհրաժեշտ է հստակեցնել նաև ներկայացված լիազորագրի գործողության ժամկետը: «Էյչ Գրուպ» ՍՊԸ կողմից ներկայացված հրավերով նախատեսված նմանատիպ պայմանագրում և պայմանագրին կից համաձայնագրում առկա են ժամանակագրական անհամապատասխանություններ կապված այդ փաստաթղթերի կնքման և կատարված վճարումների հետ: «ԻՆՏԵՐԳԵՈՏԷԿ» ՍՊԸ կողմից ներկայացված հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը թերի են:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը՝ և 17.01.2020թ. ծանուցել մասնակիցներին ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ «Գեոշին Գրուպ» ՍՊԸ, որի ժամկետանց հարկային պարտավորությունները կազմում են 4000 ՀՀ դրամ, որը չի գերազանցում մասնակցի գնային առաջարկի 1%-ը, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.2 29.01.2020թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Տերյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 1100-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Հովսեփյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Գնահատող Ա. Միքայելյան

Գնահատող Գ. Հովսեփյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան